ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ,ՍԱՆՀԻԳԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՅՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <ԿՈՏ-ՄՄ-ՄՊՁԲ-25/1>

ք. Հրազդան 10 փետրվարի 2025 թ.

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը գլխավոր քարտուղար՝ Լևոն Պետրոսյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա(այսուհետև «Գնորդ»), մի կողմից, և <<Ս.Վիրաբյան>> ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Ս.Վիրաբյանի, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝պայմանագիր) սահմանված կարգով,ծավալներով ,ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագիր N 1 հավելվածով՝ Տեղնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ապրանք),իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 452 200 (չորս հարյուր հիսուներկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,ներառյալ ԱԱՀ:Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[17.1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) ,բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ,ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում,բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի,Ապրանքը ստացողի և Վաճառողի միջև եռակողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը և Ապրանք ստացողը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից,կնքվում է 2 օրինակից,որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մաս:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ՝ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Կոտայքի մարզպետարան | «Ս.Վիրաբյան» ՍՊԸ |
| ք.Հրազդան, Կենտրոն վարչ.շենք | ՀՀ Կոտայքի մարզ Ք.Հրազդան Կենտրոն |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | թաղամաս շ.33 |
| 900121120050 | «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ |
| հվհհ 03029935 | Հրազդանի մ/ճ |
| Մարզպետի աշխատակազմի | հ/հ 163158062915 |
| գլխավոր քարտուղար՝Լ.Պետրոսյան | հվհհ 03017258 |
| | տնօրեն՝Ս.Վիրաբյան |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դրույթներ

*Հավելված N 1*
*« » փետրվարի 2025 թ. կնքված*
*«ԿՈՏ-ՄԱ-ԱՊՁԲ-25/1» ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| երավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը ՀՀ դրամ | ընդհանուր գինը ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | քանակը՝ ըստ եռամսյակների | | | |
| | | | | | | | | | | I | II | III | IV |
| 1 | 31531300-1 | լամպ՝ տնտեսվող | ՌԴ | Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 20, 25 և 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականության, համապատասխան երկարությամբ, ԳՕՍՏ 6825-91: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍՏ Ռ ՄԷԿ 61195-99 | հատ | 550 | 55000 | 100 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 10 | 10 | 35 | 45 |
| 2 | 31531500-1 | ցերեկային լամպ 60սմ | ՌԴ | ցերեկային լամպ լյումինիսցենտային, 60սմ երկարությամբ, գույնը՝ դեղին: Գործարանային փաթեթավորմամբ: | հատ | 350 | 17500 | 50 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 10 | 10 | 10 | 20 |
| 3 | 31531600-1 | ցերեկային լամպ 120սմ | ՌԴ | ցերեկային լամպ լյումինիսցենտային, 120սմ երկարությամբ. գույնը՝ դեղին: Գործարանային փաթեթավորմամբ: | հատ | 400 | 20000 | 50 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 10 | 10 | 10 | 20 |
| 5 | 31651400-1 | մեկուսիչ ժապավեններ | ճապոնիա | Կպչուն մեկուսիչ ժապավեն, լայնությունը՝ 1,8 սմ, երկարությունը՝ առնվազն 10մ: Գույնը՝ սև, կարմիր, սպիտակ, կապույտ: | հատ | 200 | 5000 | 25 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 10 | 5 | 5 | 5 |
| | | | | | | | | | ՀՀ Կոտայքի մարզպետի | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | լարումը՝ 220Վ, հողանցումով, անվանական հոսանքը՝ 16Ա, նյութը՝ տեխնոպոլիմեր, գույնը՝ սպիտակ, մեկ տեղանոց: | | | | | Վարչական շենք | | | | |
| 7 | 31684400-2 | վարդակ | ՌԴ | Վարդակ անջատիչ, ներկառուցվող տեսակի, նախատեսված լույսը միացնելու և անջատելու համար, կոճակների քանակը՝ մեկ հատ, անվանական լարումը՝ 250Վ, 50հց, անվանական հոսանքը՝ 10Ա, գույնը՝ սպիտակ: Նախատեսված գրասենյակների համար: | հատ | 500 | 11000 | 22 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 5 | 5 | 5 | 5 |
| 8 | 33761000-1 | զուգարանի թուղթ, ռուլոնով | ՀՀ | զուգարանի թուղթ, ռուլոնով, առնվազն 65մ, առավելագույնը՝ 3 շերտ, սպիտակ: | հատ | 100 | 22900 | 229 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 57 | 57 | 57 | 58 |
| 9 | 39612100-1 | հատակի մածիկ | ՀՀ | Չցնդող նյութերի զանգվածային մասը՝ ոչ պակաս 30 %-ից, կաթվանկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 75oC-ից, փայլեցնող հատկությունը ըստ փայլաչափ սանդղակի՝ ոչ պակաս 12-ից, թաղանթի ջրակայունությունը՝ ոչ պակաս 1 բալից, թաղանթի փոշեկուտակման հատկությունը՝ ոչ ավելի 0,8 մգ/սմ2-ից, չափածրարված 400 գ-ից մինչև 2500 գ տուփերով: | կգ | 1400 | 70000 | 50 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 12 | 13 | 13 | 12 |
| 10 | 39831100-1 | լվացող նյութեր | ՀՀ | Լվացող միջոցեր նախատեսված ապակիների լվացման, փայտի կամ լամինատե մակերևույթների լվացման և մաքրման համար: Օճառե հիմքով, փաթեթավորված 1-2լ տարաներով: Սպիտակ,բաց դեղնավուն կամ գունավորված հատիկավոր փոշի:Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5%,pH-ը 7,5-11,5,ֆոսֆորաթթվական աղերի փրփրագոյացզանգվածային մասը ոչ ավելի 22%,փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար ) ոչ ավելի 200մմ,փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր,լվացող ունակությունը ոչ պակաս 85%, սպիտակեցնող ունակությունը(քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80%:Անվտանգությունը,մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 2004թ դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված,,Մակեևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի,, համաձայն: | լիտր | 800 | 128000 | 160 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 40 | 40 | 40 | 40 |
| 11 | 39831241-1 | օճառ,ձեռքի | Բուլղարիա | Չորսուների, կտորների և այլ ձևերով , որակական թիվը(ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս <<Չեզոք>> և <<Էքստրա>> տեսակների համար 78գ,<<Մանկական>> և<<Սովորական>> տեսակների համար 74գ,սոդայանյութերի զանգվածային(վերահաշվարկված ըստ Na20)մասը ոչ ավելի <<Չեզոք>> տեսակի համար բացակայում է, <<Էքստրա>> տեսակի համար 0,2%,,<<Մանկական>> տեսակի համար 0,15%,<<Սովորական>> տեսակի համար 0,22%օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը_(տիտրը) 36-41 C,նատրիումի ջլորիդի զանգվածային մասը 0,4%-ից ոչ | կգ | 2400 | 48000 | 20 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 5 | 5 | 5 | 5 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված <<2-111-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ>> սանիտարական կանոնների և նորմերի: | | | | | | | | |
| 12 | 39831245-1 | օճառ,հեղուկ | ՀՀ | Մածուցիկ հեղուկ՝ հակաբակտերիալ հատկություններով: Ճարպաթթուների զանգվածային բաժինը՝ ոչ ավել 1,5%: Ջրածնային ցուցանիշ՝ 6,0-10,0 PH: Ծանր մետաղների գումարային զանգվածային բաժինը՝ ոչ ավելի 0,002%: Տարաների տարողությունը՝ 250մլ: Անվտանգությունը և փաթեթավորումը՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2005թ նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված <<2-111-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ>> սանիտարական կանոնների և նորմերի: | լիտր | 350 | 35000 | 100 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 25 | 25 | 25 | 25 |
| 13 | 39836000-1 | ավել, սովորական | ՀՀ | Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության,քաշը չոր վիճակում (350-500) գրամ,երկարությունը 85-90սմ,ավող մասի լայնքը 50-60սմ: | հատ | 750 | 30800 | 41 | ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ք.Հրազդան Վարչական շենք | 10 | 10 | 10 | 11 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Կոտայքի մարզպետարան
ք.Հրազդան, Կենտրոն վարչ.շենք
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**900121120050**
հվհհ 03029935
Մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Լ.Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Ս.Վիրաբյան» ՍՊԸ**
**ՀՀ Կոտայքի մարզ Ք.Հրազդան Կենտրոն թաղամաս շ.33**
**«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ**
Հրազդանի մ/ճ
**հ/հ 163158062915**
հվհհ 03017258
**տնօրեն՝ Ս.Վիրաբյան**

(ստորագրություն)
ԿՏ

*Հավելված N 3*
*« » փետրվարի 2025 թ. կնքված*
*«ԿՈՏ-ՍԱ-ԱՊՁԲ-25/1» ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 31531300-1 | լամպ՝ տնտեսվող | | 5500 | 5500 | 11000 | 11000 | 11000 | 30000 | 30000 | 30000 | 55000 | 55000 | 55000 | 55000 |
| 2 | 31531500-1 | ցերեկային լամպ 60սմ | | 3500 | 3500 | 7000 | 7000 | 7000 | 10500 | 10500 | 10500 | 17500 | 17500 | 17500 | 17500 |
| 4 | 31531600-1 | ցերեկային լամպ 120սմ | | 4000 | 4000 | 8000 | 8000 | 8000 | 12000 | 12000 | 12000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 5 | 31651400-1 | մեկուսիչ ժապավեններ | | 2000 | 2000 | 3000 | 3000 | 3000 | 4000 | 4000 | 4000 | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 6 | 31684400-1 | վարդակ | | 1500 | 1500 | 3000 | 3000 | 3000 | 4500 | 4500 | 4500 | 9000 | 9000 | 9000 | 9000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 31684400-2 | վարդակ | | 2500 | 2500 | 5000 | 5000 | 5000 | 7500 | 7500 | 7500 | 11000 | 11000 | 11000 | 11000 |
| 8 | 33761000-1 | զուգարանի թուղթ, ռուլոնով | | 5700 | 5700 | 11400 | 11400 | 11400 | 17100 | 17100 | 17100 | 22900 | 22900 | 22900 | 22900 |
| 9 | 39812100-1 | հատակի մածիկ | | 16800 | 16800 | 35000 | 35000 | 35000 | 53200 | 53200 | 53200 | 70000 | 70000 | 70000 | 70000 |
| 10 | 39831100-1 | լվացող նյութեր | | 32000 | 32000 | 64000 | 64000 | 64000 | 96000 | 96000 | 96000 | 128000 | 128000 | 128000 | 128000 |
| 11 | 39831241-1 | օճառ,ձեռքի | | 12000 | 12000 | 24000 | 24000 | 24000 | 36000 | 36000 | 36000 | 48000 | 48000 | 48000 | 48000 |
| 12 | 39831245-1 | օճառ,հեղուկ | | 8750 | 8750 | 17500 | 17500 | 17500 | 26250 | 26250 | 26250 | 35000 | 35000 | 35000 | 35000 |
| 13 | 39836000-1 | ավել, սովորական | | 7500 | 7500 | 15000 | 15000 | 15000 | 22500 | 22500 | 22500 | 30000 | 30800 | 30800 | 30800 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Կոտայքի մարզպետարան
ք.Հրազդան, Կենտրոն վարչ.շենք
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**900121120050**
հվհհ 03029935
Մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Լ.Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
**«Ս.Վիրաբյան» ՍՊԸ**
**ՀՀ Կոտայքի մարզ Ք.Հրազդան Կենտրոն թաղամաս շ.33**
**«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ**
Հրազդանի մ/ճ
**հ/հ 163158062915**
հվհհ 03017258
**տնօրեն՝ Ս.Վիրաբյան**

(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 4*
*« » փետրվարի 2025 թ. կնքված*
*«ԿՈՏ-ՄԱԱՊՁԲ-25/1» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*« » փետրվարի 2025 թ. կնքված*
*«ԿՈՏ-ՄԱԱՊՁԲ-25/1» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20__թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն